

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԿԱԶՄԸ

Մեթոդաբանական պարզաբանումներ

Մարդահամարի հաշվառման միավոր են հանդիսացնել անհատական և խմբային (խնտիսությունավ) տնային տնտեսությունները:

Անհատական տնային տնտեսությունների թվին են դասվել.

1. Առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում բնակվող մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունը, երբ անձն ինքնուրույն ապահովում է իրեն կենսականներն անհրաժեշտ ամեն ինչով և ընդհանուր տնտեսություն վարելու համար տվյալ բնակելի միավորում բնակվող այլ անձանց հետ չի միավորում իր միջոցները,

2. Առանձին բնակելի միավորում կամ դրա մի մասում, կամ մի քանի շինություններում համատեղ բնակվող երկու և ավելի անձանցից բաղկացած տնային տնտեսությունը, որի անդամներն իրենց կենսապահովումն իրականացնում են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները: Այդ անձինք կարող են կապված լինել ազգակցական կամ ամուսնական կապով, կամ չլինել ազգական, կամ և մեկը, և մյուսը:

Խմբային (խնտիսությունավ) տնային տնտեսությունների թվին են դասվել մանկատներում, զիշերօթիկ դպրոցներում, հատուկ նշանակության դպրոցներում (օրինակ՝ երկկողմանի կամ միակողմանի ծնողագործկ երեխաների զիշերօթիկներում), ծերերի և հաշմանդամների տներում, կրոնական կիմնարկներում (օրինակ՝ մենաստաններում), բանտերում, ուղղիչ աշխատանքային գաղութներում և նման այլ հիմնարկներում համատեղ բնակվող բնակչության խմբերը: